*Ուսուցիչ՝ Սոֆյա Խաչատրյան*

| | |
|---|---|
| *Ամսաթիվ* | *28.02.23 թ.* |
| *Առարկա* | *Հանրահաշիվ* |
| *Դասարան* | *10-րդ դասարան, տնտեսագիտական հոսք* |
| *Թեմայի անվանումը* | *Ֆունկցիա /ամփոփման դաս/. Համագործակցային դաս՝ փոխադարձ ստուգումով* |
| *Օգտագործվող նյութեր՝* | *դգ. 10-րդ բնագիտական հոսքի համար*<br>*հեղ. Գ.Գևորգյան, Ա.Սահակյան* |
| *Դասի նպատակ* | *Ամրապնդել գիտելիքները թեմայից:* |
| *Վերջնարդյունքներ* | ✓ *Իմանալ ֆունկցիայի սահմանումը և հատկությունները,*<br>✓ *կարողանալ կատարել գործողություններ ֆ.-ի հետ,*<br>✓ *կարողանալ գծապատկերել և ձևափոխել,*<br>✓ *կարողանալ հետազոտել ֆ.-ն ալգորիթմով,*<br>✓ *կարողանալ գծապատկերել ցանկացած ֆ.-ի գրաֆիկ և հակառակը՝գրաֆիկով տալ հատկություններ:* |
| *Դասի ընթացքը* | *Դասը սկսվեց կազմակերպչական մասով: Ներկայացվեց դասի նպատակը և խնդիրները: ՛Մտագրոհ՛ մեթոդով վերհիշեցին ֆունկցիային վերաբերող գաղափարները,որից հետո հարցադրումների մեթոդով առանձին-առանձին սովորողների միջոցով վեր հանվեցին ֆունկցիայի բոլոր հատկությունները, գրաֆիկները և բոլոր բանաձևերը:*<br>*Դասարանը բաժանված էր 4 խմբի. յուրաքանչյուր խումբ ուներ իր աշխատանքային պլանը:*<br>*Յուրաքանչյուր 2 խմբին հանձնարարվեց ուսումնասիրել նույն ֆ.-ի գրաֆիկ: Որոշակի ժամանակ անց խմբերը փոխանակեցին իրենց աշխատանքները՝ յուրաքանչյուր խումբ գրատախտակին ներկայացնում էր իր աշխատանքը, քննարկում մյուս խմբի կատարած ուղղումները:*<br>*Խմբերը ներկայացրին իրենց աշխատանքները, հստակ պատասխանեցին իրենց առջև դրված* |

| | |
|---|---|
| | *հարցադրումներին:*<br>*Դասն ամփոփվեց ՙՀնգյակ՚ մեթոդով:*<br>*Գնահատումը կատարվեց ՙԻնքնագնահատման սանդղակով՚:* |
| ***Օգտագործվող մեթոդ/ներ*** | *ՙՄտագրոհ՚, ՙՀարցադրումների մեթոդ՚* |
| ***Տերմիններ*** | *Ֆունկցիա, գրաֆիկ, ալգորիթմ* |
| ***Տնային աշխատանք*** | *Յուրաքանչյուր զույգ խմբի սովորողների հանձնարարվեց մյուս զույգին հանձնարարված աշխատանքը:* |